ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1 ☎/0322/ 4-61-92
Fax /0322/2-07-70

թիվ_____

« _____» _____ 2023թ.

Ռոբերտ Հովսեփյանին
ք. Երևան, 0018, Խորենացու 3 նրբ., 10/2,
էլ. փոստ Hovs.robert@gmail.com
հեռ.099006008

Ձեր՝ 11.09.2023թ. թիվ LRDC-AA98-13FC-F242 հարցումին

Տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերությունով սահմանվում է, որ. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանվում է՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանվում է՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ ոչ ոք իրավունք չունի արգելել սեփականատիրոջը՝ իր հայեցողությամբ տնօրինելու, այդ թվում օրենսդրությամբ սահմանված կարգով օտարելու իրեն պատկանող գույքը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ձեր դիմումը (հարցումը) քննարկվել է Ֆիոլետովո համայնքի ղեկավարի հետ: Համայնքի ղեկավարը հայտնել է, որ ինքը

կատ. Ն. Մանուկյան
հեռ. /0322 2-34-99/

լիազորություն չունի համայնքի որևէ բնակչի արգելելու իր հայեցողությամբ օտարելու սեփական գույքը և հայտնել է, որ Դուք հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար երբևէ Ֆիոլետովոյի համայնքապետարան չեք դիմել:

Հարգանքով՝

13/09/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. Խաչատրյան

կատ. Ն. Մանուկյան
հեռ. /0322 2-34-99/